

ազգաւորութիւն եր տոհմին բնութեան: 6 Եւ երթեալ յանդիման լիներ թագաւորին Մազքթաց, իշխանին բազմութեան զաւրացն Յոնաց. եւ եկաց առաջի Նոցա, սկսաւ քարոզել եւ աւետարանել Նոցա զՔրիստոս: 7 Ասէ ցնոսա՝ թէ ծաներո՛ւք զԱստուած: 8 Լուան եւ ընկալան զառաջինն եւ հնազանդեցան: 9 Ապա սկսան քննել զաւրէնսն Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ՝ թէ ատելի է Աստուծոյ աւարառութիւն եւ յափշտակութիւն, սպանութիւն, ազահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց: 10 Ապա այսպիսի իմն իրաւք իբրեւ լուան, զայրացան ընդ բանս Նորա եւ ասէն. 2ի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞նչ կեցցուք այսչափ անչափ զաւրաց բազմութիւնք: 11 Եւ թէպէտ բիւրաւոր բանիւք բարեաւք կամեր հաճել զսիրտս Նոցա, ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին ցմիմեանս. Եկեալ այսպիսի բանիւք՝ կամի ի քաջութենէ որսոյն կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, եւ դարձցուք յաւրէնս քրիստոնեութեան, ի՞նչ կեցցուք, զի ոչ յերիվար հեծցուք ըստ բնութեան արինաց սովորութեանց մերոց: 12 Այլ, ասէին, այս խորհուրդ Յայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ, եւ մեք ի Յայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք:

13 Ապա շրջեցաւ թագաւորն, եւ լուաւ բանից զաւրացն իւրոց. եւ կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն, եւ արծակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ: 14 Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս: 15 Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառն Յաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Յայոց ի Յաբանդ, ի գեաւղն՝ որ անուանեալ կոչի Ամարագ: 16 Եւ եղին զնա առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Յայաստան երկրին: 17 Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց գաւառացն այնոցիկ, զսորա զաւր տաւնին զյիշատակ քաջութեանն ցնծան:

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս մարտի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց թագաւորին Մազքթաց յաշխարհն իշխանութեան Յայոց թագաւորին, եւ կամ ո՛րպէս սատակեցաւ նա զաւրաւքն իւրովք հանդերձ:

2 Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանեսան անհնարին նիւթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Յայոց, եւ զումարեաց ժողովեաց զամենայն զաւրս Յոնաց եւ Փոխաց,